ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

“Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի նախագծի ընդունման վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Նախագիծը ներկայացվում է ի կատարումն ՀՀ կառավարության “ՀՀ 2017թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, ՀՀ 2016թ. պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին” ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 27-րդ կետի:

2. Կարգավորման առարկան

Հիմք ընդունելով վերը նշվածը,

ինչպես նաև ՀՀ Նախագահի օգնական Ա. Աբելյանի անունից ստացված գրությունը (մտից **010/444-17** 2017-01-11), որով ներկայացվում է ՀՀ 2017թ. պետական բյուջեով նախատեսված քսան միլիոն ՀՀ դրամ գումարի բաշխման մասին Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային միությունների գործունեությունը համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2016թ. դեկտեմբերի 22-ին կայացած նիստի որոշումը,

ներկայացվող նախագծով սահմանվում է նշյալ գումարի բաշխումը: Ըստ այդմ նախատեսվում է, որ

ա/ այդ գումարից ութ միլիոն ինը հարյուր իննսուն ութ (8998) մլն ՀՀ դրամը հավասարապես բաշխվում է ըստ Խորհրդում ներկայացված էթնիկ համայնքների, և համայնքներն իրենց հերթին բաշխում են ըստ իրենց հասարակական կազմակերպությունների, իսկ

բ/ տասնմեկ մլն. երկու հազար ՀՀ դրամը փոխանցվում է Խորհրդի անդամ հանդիսացող «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ հաշվեհամարին, որից մեկ մլն երկու հազար ՀՀ դրամը Խորհրդի միասնական կրթամշակութային միջոցառումների, իսկ տասը մլն. ՀՀ դրամը՝ Խորհրդի հետագա որոշումների հիման վրա հաստատվող ազգային-մշակութային տարբեր կազմակերպությունների (այդ թվում՝ Խորհրդի անդամ չհանդիսացողների) կողմից էթնիկ համայնքների կրթամշակութային զարգացմանը միտված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման նպատակով:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտն ընդունվում է յուրաքանչյուր տարի, որի արդյունքում ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները ստացված գումարներն օգտագործում են ազգային ինքնության պահպանությանն ու զարգացմանն ուղղված կազմակերպական, կրթական ու մշակութային խնդիրների լուծման նպատակով և տարեվերջին հաշվետվություն են ներկայացնում իրականացված աշխատանքների մասին:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար–նախարար Դավիթ Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

“Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

“Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

“Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

“Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի նախագիծն ընդունելու դեպքում 2017 թվականի ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյան